ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

-174-
01.11.2018 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան
Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու թիվ 17 , 18-Ա և համայնքի ղեկավարի թիվ 23 որոշումները կրկնակի անգամ :

Առդիր ՝ 4 թերթ :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԱԼՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք, հասցե գ. Գոգարան

հեռ՝0255 6 06 04

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 15 » Հոկտեմբերի 2018 թվականի N 17

### ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով ՝ Գոգարան համայնքի ավագանին

Որոշում է .

Հավանություն տալ համայնքի ղեկավարի ներկայացրած 2018 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման հաղորդմանը :

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ | | | |
| ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ | | | |
| ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ | | | |

Գոգարան համայնքի ղեկավար՝ ---------------------- Արթուր Գալոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք, հասցե գ Գոգարան,
հեռ.0255 6 06 04 էլ. փոստ՝ gogaran.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » Հոկտեմբերի 2018 թվական, 18–Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 31 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Գոգարան համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ | [signature] | | |
| ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ | [signature] | | |
| ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ | [signature] | | |
| ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

Կ.Տ (ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու
2018 թվականի Հոկտեմբերի 15- ի N 18-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Մարուքյան Տիգրան Վահագնի – 50.0 հազար դրամ /ուսման վարձ /
2.Գասպարյան Սիրուն Տիգրանի – 50.0 հազար դրամ / սոց. օգնություն /
3.Գրիգորյան Եղսան Կարապետի – 30.0 հազար դրամ / սոց. օգնություն /

Գոգարան համայնքի ղեկավար ----------------------- Արթուր Գալոյան
(ստորագրություն ) (անուն, ազգանուն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնք,
գ. Գոգարան , հեռ. 0255 6 06 04

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» Հոկտեմբերի 2018 թվականի N 23

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԵՂԻՇԵ ՀԱԼԱՋՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ե. Հալաջյանի 2018 թ. հոկտեմբերի 12 –ի հայտը , ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով , 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թ . հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ և 6-րդ կետերով՝

Որոշեցի .

1.Գոգարան համայնքի 1-ին փողոց , թիվ 37-1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր՝ Ե. Հալաջյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ /ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն , 2018 թվականի ժամանակահատվածի համար:

2.Եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

2018 թ. Հոկտեմբերի 16

գ.Գոգարան